ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ղազախստան, քաղաք Ալմաթի 2023թ. մայիսի 22-25

3. **Հրավիրող կողմը.**

ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտե

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) «Որակյալ տվյալներ - արդյունավետ քաղաքականություն» տարածաշրջանային ծրագրի շրջանակում, ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեի և Ղազախստանի Ազգային վիճակագրական բյուրոյի կողմից համատեղ կազմակերպված՝ «Մարդահամարներ. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով ֆորումի աշխատանքներին և ԱՊՀ անդամ պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 66-րդ նիստի մասնակցությունը:

5. **Քննարկված թեմաները.**

- Մարդահամարների կարևորությունը՝ որպես բնակչությանն առնչվող հիմնարար տեղեկատվական ռեսուրս, երկարաժամկետ հեռանկարում հասարակությունների կառուցվածքային փոփոխություններն արտացոլելու համար, ինչպես նաև տվյալների ամենակարևոր աղբյուր՝ կայուն զարգացման ազգային ծեռքբերումների մշտադիտարկման, նպատակային ծրագրերի պլանավորման, բնակչության կենսամակարդակի բարելավման, արժանապատիվ աշխատանքի ապահովման, առողջապահության, կրթության, սոցիալական ծառայությունների զարգացման համար, ինչպես նաև ներքին (երկրի ներսում) անհամամասնությունների համահարթեցման ուղղությամբ,
- ԱՊՀ անդամ երկրներում 2020թ. շրջափուլի մարդահամարների և կացարանների հաշվառումների նախապատրաստման, անցկացման, արդյունքների տարածման և տվյալների վերլուծության ազգային փորձերը,
- Ազգային վիճակագրական ծառայությունների առաջարկների ընդհանրացումը, որոնք կօգտագործվեն 2030 թվականի շրջափուլի մարդահամարի և

կացարանների հաշվառումների անցկացման վերաբերյալ միջազգային կազմակերպությունների հանձնարարականների մշակման ժամանակ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

6.1. Ֆորումն անցկացվեց հինգ հիմնական նիստերով.

1) Մարդահամարների կազմակերպման և անցկացման ազգային և միջազգային ասպեկտները

Մարդահամարների միջազգային ասպեկտներին իրենց ելույթ-ներկայացումներով անդրադարձան ՄԱԿ ԵՏՀ Վիճակագրական բաժանմունքի Սոցիալական և ժողովրդագրության բաժնի ղեկավարը, ԱՊՀ Վիճակագրական կոմիտեի նախագահը, Պաշտոնական վիճակագրության միջազգային ասոցիացիայի (IAOS) և Միջազգային վիճակագրական ինստիտուտի (ISI) նախագահը, ԱՊՀ Գլխավոր Քարտուղարի տեղակալը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրենի տեղակալը, ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության խորհրդականը: Մարդահամարների կազմակերպման և անցկացման ազգային փորձը ներկայացրեց Ղազախստանի Ազգային վիճակագրական բյուրոյի վիճակագրական ռեգիստրների և դասակարգումների դեպարտամենտի տնօրենը, իսկ բնակչության տվյալների օգտագործումը Կայուն Զարգացման Նպատակների իրականացման համար շնորհանդեսը ներկայացրեց ՌԴ Գիտությունների ակադեմիայի ժողտնտեսության կանխատեսումների ինստիտուտի ավագ գիտաշխատողը:

2) Մարդահամարի տվյալների կիրառությունը երկրների արդյունավետ քաղաքականության մշակման և սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումների համար: Մարդահամարը բիզնես հանրության համար

ԱՊՀ երկրներում ժողովրդագրական փոփոխությունների և միջսերնդային տրանսֆերտների վերլուծությամբ հանդես եկավ Ազգային հետազոտական համալսարանի Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի ժողովրդագրության ինստիտուտի տնօրենը: Խորագրի ներքո շնորհանդեսներ ներկայացրին ԱՊՀ անդամ երկրների միջպառլամենտական ասամբլեայի մշտական հանձնաժողովի քարտուղարը, Ղրղզստանի էկոնոմիկայի և առևտրի առաջին փոխնախարարը, Ուզբեկստանի օրենսդրական պալատի պատգամավորը, Գելափ Ինթերնեյշնլ ասոցիացիայի փոխնախագահը: Ներկայացվեցին նաև կոնկրետ ոլորտներում տվյալների օգտագործման փորձերը:

3) **Տվյալների հավաքագրման երկրների փորձը և պրակտիկան**

2020թ. շրջափուլի ավանդական եղանակով մարդահամարիների անցկացման իրենց փորձերը ներկայացրին Բելառուսի, Ղազախստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի, Թուրքմենստանի Վիճակագրական մարմինների ներկայացուցիչները, որոնցից մի քանի երկրներ այդ գործընթացում օգտագործել էին նաև ինտերնետով տվյալների հավաքման հնարավորությունը: Սույն խորագրի ներքո, Արմստատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետը հանդես եկավ «2022թ.-ին համակցված մեթոդով մարդահամարի անցկացման Հայաստանի փորձը» շնորհանդեսով, ներկայացվեցին դրա առանձնահատկությունները, մարդահամարի ծրագիրը, կազմակերպչական և տեխնոլոգիական նորարարությունները, առաջացած դժվարությունները և քաղված դասերը:

4) **Բնակչության մասնակցությունը մարդահամարներին. խնդիրներ և լուծման ուղիներ**

Սույն նիստի վարողն էր ԱՐՄՍՏԱՏ-ի նախագահը: Ներկայացվեցին շնորհանդեսներ ՄԱԿ ԵՏՀ Վիճակագրական բաժանմունքի, ՄԹ մարդահամարների հարցերով միջազգային փորձագետի և ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի ներկայացուցչի կողմից, որոնք վերաբերում էին մարդահամարների օրենսդրական կարգավորումներին, բնակչության պարտադիր մասնակցությա՞ն, թե քաղաքացիական պարտավորության միջազգային փորձառություններին առնչվող հարցերին:

5) **Մարդահամարի տվյալների մշակման, տեսապատկերավորման և տարածման տեխնոլոգիական նոր լուծումներ:**

Մարդահամարների տեսապատկերավորման և տարածման տեխնոլոգիաների վերաբերյալ շնորհանդեսներ ներկայացվեցին Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի վիճակագրական ծառայությունների կողմից:

Վերոհիշյալ բոլոր ելույթների շուրջ ծավալվեցին քննարկումներ, որոնցից առավել ուշարժանն էին դասական եղանակով մարդահամարների ժամանակ ինտերնետով հավաքվող տվյալների որակի հսկման գրեթե անհնարիության հարցը, այդ եղանակով ստացվող անվանական տեղեկությունների գաղտնիության ապահովման հարցերը և տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելու կամ ոչ ամբողջական տեղեկություններ տրամադրելու դեպքում ռեսպոնդենտներին պատասխանատվության ենթարկելու իրավակիրառական պրակտիկայի բարդույթները՝ դատարան ներկայացնելու համար մեծ ծավալի ապացույցներ հավաքելու անհնարիությունը (հարցադրումները գերազանցապես միջազգային փորձագետ Յան Ուայտից, Մեծ Բրիտանիա): Իսկ վարչական ռեգիստրների օգտագործման եղանակով մարդահամարների ժամանակ առավել ուշարժանը բնակչության վարչական ռեգիստրի

ամբողջականության և այլ վարչական ռեգիստրների տվյալների հետ ինտեգրման հարցերն էին:

6.2. ԱՊՀ անդամ պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 66-րդ նիստին, որին մասնակցում էր նաև ԱՊՀ Գլխավոր Քարտուղարի տեղակալը, քննարկվեցին ԱՊՀ տարածքում վիճակագրական գործունեության զարգացման և միջազգային համագործակցության ընդլայման մի շարք հարցեր: Այդ թվում՝

1) «ԱՊՀ վիճակագրության զարգացում» ծրագրի իրականացման աշխատանքների ընթացքի մասին.
2) «ԱՊՀ վիճակագրության զարգացում» ծրագրի հետագա զարգացման մասին Համագործակցության երկրների ազգային վիճակագրական ծառայությունների առաջարկները
3) ԱՊՀ տարածաշրջանում արժույթների գնողունականության համարժեքության վրա հիմնված՝ Գլոբալ միջազգային համադրումների ծրագրի 2021 թվականի փուլի աշխատանքների ընթացքի մասին.
4) ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համատեղ ծրագրի մասին.
5) ԱՊՀ երկրների ներկայացուցիչների համար Ռուսաստանի Դաշնության բյուջեի հաշվին բուհերում «վիճակագրություն» մասնագիտությամբ վերապատրաստման քվոտաներ հատկացնելու մասին.
6) 2023-2024 թթ. ԱՊՀ վիճակագրության արտադրողների և օգտագործողների միջազգային ֆորումի և վիճակագրության վերաբերյալ միջազգային սեմինարների նախապատրաստման մասին.
7) Միջազգային ուսանողական վիճակագրական փառատոնի և օլիմպիադայի արդյունքների մասին.
8) ԱՊՀ անդամ պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 2022 թ.աշխատանքի ընթացքի մասին.
9) ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի 2022թ. աշխատանքների մասին.
10) ԱՊՀ վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալի ընտրության մասին.
11) ԱՊՀ անդամ պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 67-րդ նիստի մասին.
12) ԱՊՀ անդամ պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 66-րդ նիստի կոմյունիկեի մասին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

7.1 Ֆորումի աշխատանքներին (այդ թվում՝ առցանց) մասնակցում էր 150 ներկայացուցիչ՝ Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Մոլդովայի (առցանց), Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի վիճակագրական ծառայություններից՝ ղեկավարներ և մասնագետներ, պետական մարմինների ներկայացուցիչներ, Ազգային հետազոտական կենտրոնների փորձագետներ և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և փորձագետներ:

Մասնակիցները համաձայնվեցին հետևյալ հարցերի շուրջ.

- Մարդահամարները պահպանում են իրենց կարևորությունը՝ որպես բնակչության տվյալների վերաբերյալ հիմնական ռեսուրս, որն անհրաժեշտ է երկրների սոցիալ-տնտեսական զարգացման վերլուծության և կանխատեսումների, կայուն զարգացման նպատակների և համապատասխան միջազգային պարտավորությունների մասով ազգային ձեռքբերումների մշտադիտարկման համար
- Մարդահամարների արդյունքները պետք է ունենան համընդհանուր հասանելիություն, այդ թվում՝ տարածքային կտրվածքով, կարևորելով տարբեր կատեգորիայի սպառողների պահանջարկը, ներառյալ՝ միկրոտվյալների (անվանազերծված) հետ աշխատելու հնարավորությունը
- Ազգային վիճակագրական մարմինները հանձնառու են ստեղծել/զարգացնել մարդահամարների 2030թ. շրջափուլի օրենսդրական բազան
- Նպատակահարմար է 2030 շրջափուլի նախապատրաստման աշխատանքներն սկսել առնվազն չորս տարի առաջ
- Ժամանակակից թվային տեխնոլոգիաների զարգացումն ու կիրառումը կարող է հանդիսանալ այն միջոցը, որը կնվազեցնի ռեսպոնդենտների և մարդահամարի անձնակազմի ծանրաբեռնվածությունը՝ կրճատելով տվյալների մշակման և արդյունքների հրապարակման ժամկետները
- Մարդահամարի ծրագիրը պետք է համապատասխանեցվի մասնագիտացված սոցիալ-ժողովրդագրական հետազոտությունների ծրագրերի հետ, որպեսզի ընտրվի տվյալների ստացման ավելի օպտիմալ եղանակ և նվազեցվի ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը
- Վիճակագրական արտադրանքի արդիականացումը հնարավոր է վարչական տվյալների ինտեգրման միջոցով: Վարչական աղբյուրներով ստացվող տվյալների ամբողջականության և ճշգրտության, ինչպես նաև մարդահամարի արդյունքների որակի գնահատման նպատակով անհրաժեշտ է իրականացնել

փորձարարական և հետմարդահամարային հետազոտություններ

- Ազգային վիճակագրական մարմինների գործունեության առումով խոստումնալից ուղղություն պետք է դառնա մարդահամարի տվյալների հավաքագրման գործընթացում աշխարհատարածական հղումների ներդրումը, ինչպես նաև տվյալների վերլուծության և տեսապատկերման ժամանակակից մեթոդների կիրառությունը
- Կարևորել աջակցությունը ՄԱԿ-ի և միջազգային այլ կառույցների աշխատանքներին՝ 2020-ի շրջափուլի արդյունքների վերլուծության և նոր շրջափուլի նախապատրաստման նպատակով:

7.2. ԱՊՀ անդամ պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 67-րդ նիստը կկայանա 2023թ. սեպտեմբերին Սանկտ Պետերբուրգում:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ֆորումի աշխատանքների արդյունքներով ձեռք բերված պայմանավորվածությունները հիմնականում վերաբերում են մարդահամարի հաջորդ՝ 2030թ. շրջափուլի աշխատանքների կազմակերպմանը, այդ առումով միջազգային մասնագիտացված աշխատանքային խմբերի աշխատանքային քննարկումների մասնակցության, տվյալների արտադրության և տարածման այլ նախաձեռնություններին: Հատկապես, ընդգծվեց վարչական ռեգիստրների տվյալների օգտագործման հնարավորությունների ընդլայնման կարևորությունը հաջորդ շրջափուլին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020թ. շրջափուլում ՄԱԿ ԵՏՀ տարածաշրջանի ավելի շատ երկրներ են մարդահամարներն անցկացրել համակցված և վարչական ռեգիստրների օգտագործման մեթոդներով (ԱՊՀ անդամ երկրներից՝ միայն Հայաստանը): Այսպես, ՄԱԿ ԵՏՀ տարածաշրջանի երկրներից 2020թ. շրջափուլում 23 երկիր կիրառել է ավանդական մեթոդը, 19-ը՝ համակցված և 12-ը՝ միայն վարչական ռեգիստրների կիրառման մեթոդը, այն դեպքում երբ 2010թ. շրջափուլում ավանդականը կիրառվել էր 35 երկրում (2000թ.-ին՝ 40 երկրում), 10-ը՝ համակցված (2000թ.-ին՝ 5 երկրում) և 9-ը՝ վարչական ռեգիստրների կիրառմամբ (2000թ.-ին՝ 3 երկրում):

Մասնակցությունը ֆորումին և նիստին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայություններին՝ ներկայացնել իրենց ձեռքբերումները, խնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև քննարկել և վեր հանել անհրաժեշտ միջոցառումների շրջանակը՝ ուղղված ազգային վիճակագրական համակարգերի գործունեության բարելավմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

29.05.2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը - **ՀՀ վարչապետի 11.04.23թ. թիվ 402-Ա որոշում**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – Վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը – **Ղազախստանի Հանրապետություն (Ալմաթի)**

5. Գործուղման ժամկետները՝ 22-25 մայիսի 2023թ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը - **ԱՊՀ վիճակագրական կոմիտե**

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

Ճանապարհածախս, հյուրանոց, սնունդ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	Անուն, ազգանուն 1	Անուն, ազգանուն 2	Անուն, ազգանուն 3	Անուն, ազգանուն ...	Ընդամենը (հազ. դրամ)

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն 1	Անուն, ազգանուն 2	Անուն, ազգանուն 3	Անուն, ազգանուն ...	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար Ա.Հայրապետյան

29.05.23թ.